Ժ.

Հ. Գ. Գալեմքեարեան իւր «ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԿՈՒ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒ ԵՒ ՏԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ» գրքին մէջ յատուկ գլխով մը կը խօսի մանրամասն՝ հետագայ նամակիս ստորագրողին՝ Յարութիւն եպիսկոպոսի վրայ այս վերնագրով. «Յարութիւն Վ. Լեռնեան Կ. Պոլսեցի, Արք. Կեսարիոյ Պաղեստինեացւոյ (1670–1738)։ Հ. Ալիշան Հայ Վենետի մէջ 1716ին ի Վենետիկ կը յիշէ զանիկայ։ Սա արդէն Պոլսեցի կաթողիկէ հայերու հետ 1718 մայիս 6ին՝ Վենետիկէն գրած է Մխիթարայ և անոր միաբանութեան կաթողիկէութեան մասին վկայական թուղթ մը՝ որ յետոյ հրատարակուած ալ է։ Ատկէ երկու ամիս վերջն է որ կը գրէ մեր հրատարակած նամակը, որուն մէջ ի Հռովմ երբեմն անցուցած իր օրերուն յիշատակութիւնը ան-շուշտ կը հայի 1712 թուականին, յորում կատարուած է Պիոս Ե.ի սրբացուցման ժողովը. «Սոյն Համագումարին մէջ, որ երեք Նիստ ունեցած է, բազմած էին Հռո-«մայ բոլոր կարդինալները, լատին, յոյն, ասորի, քաղդէացի կաթողիկեայ Հայ-«րապետներ։ Այս բազմականաց մէջ էին նաև հետևեալ հայ կաթողիկէ բարձրաս-«տիճան եկեղեցականներ՝ Մատթէոս Սարի, երբեմն կաթողիկոս Սսոյ և պատրիարք «Կ. Պոլսոյ. Գրիգոր Արքեպ. Եդեսիոյ. Գէորգ Բենիամին, Եպիսկոպոս Եդեսիոյ, «Յովակիմ Ջուղայեցի Արքեպիսկոպոս Էջմիածնի և Յարութիւն Անաստաս, Արքեպ. «Կեսարիոյ Պաղեստինոյ» (Կեն. Երկու Հայ Պատրիարքներու. էջ 137)։

Ինքն ալ, միւսներուն պէս, ըստ կանոնական սովորութեան իր չորս վկայու-թիւնները կարդացած է առ Ս. Պապն՝ ներկայացուած խնդրոյն վրայ (Անդ)։

Յարութիւն արքեպիսկոպոս կու տայ նաև առ Մխիթար ինչ ինչ պատմական տեղեկութիւններ Պոլսոյ անցուդարձերուն շուրջ։

Գերամեծարի և ամենապատուեցելոյ Տն Տն Մխիթար

Աբբայի և Աժաբանուբեան Վարդապետի

Գերարգելի վեհանձնութեդ Յօապարգև ողջոյնն բազմաւ կա(ր)օտիւ և սխրատարած սիրով մատուցանեմ. և յայտ առնեմ վերոյ գրեցեալ տնդ. զսիրաբեր գիրն ընկալայ շնորհակալ եմ. բայց խնդրեմ զի ներիցես ինձ որ այսքան ժամանակ ծուլացա գրել. և ես ուրախ եմ որ մեծաւորք տեղոյդ այնքան սիրով ընկալեալ են զտրուիդ. մանաւանդ սրբազան Հայրապետի մեծամեծ սէրն. լուեալ բերկրեցայ յոյժ և յուսամ թէ Ավ ամ ինչ ըստ կամաց տնդ լինելոց է. նայև տրուի քո գրեալ էր կոչտութեան քարանց և զփոշին մեծի քղքիտ. այն փոքր ինչ է սիրելի բայց խնդրեմ. եթէ մին տեղ գնաս մի ըշտապիցիս ի ճանապարհին զի մի քրտնիցիս. ինձ մին քանի անգամ պատահեր է ի տեղտ. մին անգամ յովաննէս վարդպին հետ մինէրվայ գնացինք իս շուտով քալեցուց շապիքս դրջեցաւ ետոյ քանի մի օր տկարացայ. վս այն յիշեցուցանեմ. և ոչ զանկա-տիմ. եթէ տեղոյս և զմեր որպէսն հարցանես քոյին սբ աղօթիւքն այժմոյս ևս լաւ եմք. բայց եկեղեցուն խցէն վաղուց ելա այն կրակէն յետոյ մին ահ անկաւ սիրտս. քանի մի օր տկարացայ. յետոյ տէր ղուկասն եառի հետս միատեղ կու կենամք. նայև պատե-րազմէն մին ըստուգ խօսկ չի կայ ոմանք պարըշ կասեն և ոմանք կռիւ է կասեն. որն եզերելոց է չեմք գիտեր. նահապետն եկաւ ըստամպօլու. ասաց թէ ինը նաւ թագաւորա-կան և երկու մորայ ջնջուեր է. բ ղալաֆաթ անելն այրեր է և մինն ճէպէխանան նետեր է երկուսն ղումղաբուին առաջևն կոտրտեր է. և մինն պօղազն կոտրեր է. մինն սէլա-